

ՄՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ՀՈՒՆԱՆ ՊՈՂՈՍՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔԸ ԳԻՏԵԼԻՔԻ ԵՎ ԴՊՐՈՒԹՅԱՆ ՕՐԿԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

01.09.2020



Սիրելի՛ մանկավարժներ, դասախոսներ, դպրոցականներ, ուսանողներ ու ծնողներ

Այսօր մեր հանրապետությունում տոն է՝ Գիտելիքի եւ դպրության օրը: Եվ թեպետ բոլորիս կողմից սպասված ու սիրելի տոնն այս տարի մեր կրթօջախները դիմավորել են այլ մթնոլորտում, ոչ բոլորն են բացել իրենց դռները, հանրակրթական դպրոցներում այսօր չհնչեց առաջին զանգն ու չեղան ավանդական տոնական միջոցառումները, այդուհանդերձ, այս ամենը չի մթազնում գրի, դպրության արժեքն ու օրվա խորհուրդը. շնորհավորում եմ բոլորիս Սեպտեմբերի 1-ի կապակցությամբ: Բալիկներին, որոնք սեպտեմբերի 14-ին առաջին անգամ ոտք կդնեն դպրոց, մաղթում եմ չմարող սեր ուսման ու գիտելիքի հանդեպ, մեր մանկավարժներին՝ առողջություն, համբերատարություն ու բավարար հմտություններ՝ համավարակի պայմանների թելադրած կանոններով ուսումնական գործընթացն անթերի կազմակերպելու համար, իսկ ծնողներից ակնկալում եմ ըմբռնողականություն ու համագործակցություն մանկավարժների հետ, քանզի նաեւ դրանից է կախված կրթական համակարգում ներկա պայմանների դժվարությունների հաղթահարումը: Հեռավար ուսուցման փորձը ցույց տվեց, որ կարճ ժամկետներում թե՛ դպրոցները, թե՛ մանկավարժներն ու ծնողները կարող են շատ հարցերի լուծումներ գտնել, ու ամենակարեւորը երեխաների կրթվելու իրավունքի ապահովումն է, համոզված եմ՝ կկարողանանք հարմարվել նաեւ նոր կրթական կարգին, քանզի հայերիս մեջ առաջնային է ուսում ստանալն ու մանկավարժի հանդեպ հարգանքը:

Գնահատենք այն ջանքերը, որոնք ներդնում է պետությունը՝ ուսումնական գործընթացի անընդհատությունն ապահովելու համար:

Շնորհավոր՝ Սեպտեմբերի 1, շնորհավոր՝ 2020-2021 ուսումնական տարվա մեկնարկը: